

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 2-ին, կիրակի: Գ կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տրդատ աբղ. Մարտիրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց հոգշ. Տ. Մաշտոց աբղ. Ժողոյանը՝ օրվա ընթերցվածից բնաբան ընտրելով՝ «Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համաոտել զբանն ճշմարտութեան» (Բ Տիմ. Բ 15):

***

Փետրվարի 4-ին, երեքշաբթի.- Սրբոց Ղևոնդեանց քահանայիցն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ «Քանզի Հայր մեր զսուրբ Աւետարանն գիտեմք և Մայր՝ զԱռաքելական Կաթողիկէ եկեղեցի» /Եղիշե/ բնաբանով քարոզ խոսեց արժ. Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

Պատարագին ներկա էին նաև քահանա հայրեր Էջմիածնից և մոտակա շրջաններից:

***

Փետրվարի 6-ին, հինգշաբթի.- Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց: Քարոզի նյութը Վարդանանց նվիրումն էր առ Եկեղեցին և Ազգը:

Հավարտ պատարագի կատարվեց «Տօն անուանակոչութեան Նորին Վեհափառութեան **Տ. Տ. Գարեգնի Առաջնոյ** Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց» եկեղեցական կարգը:

Պատարագից հետո Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ արդեն ավանդույթ դարձած հանդիսություն՝ նվիրված Վարդանանց հիշատակին: Հանդիսության վերջում դասախոսություններից, հնչած բանաստեղծություններից, շարականներից և երգերից հետո հուսկ բանք ասաց Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը /տես էջ 223/:

***

Փետրվարի 9-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան:

Փետրվարի 8-ին, հընթացս երեկոյան ժամերգության, ինչպես թելադրում է «Տօնացոյցը», եկեղեցիների վարագույրները փակվեցին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց գերշ. Տ. Ներսես արք. Պոզապալյանը՝ «Բանն որ ընդ Հօր յէութեան եւ համագոյ Սուրբ Հոգւոյն, զպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւթ բնութեանս, զոր զարդարեալ փառօք, եդ ի դրախտին փափկութեան» /Շարական/ բնաբանով:

***

Փետրվարի 13-ին, հինգշաբթի.- Երեկոյան ժամերգությունից հետո կատարվեց *Նախատօնակ,* և «Քրիստոս փառաց» տաղի երգեցողության ժամանակ հավատացյալները վառեցին մոմերը՝ Լույսը Եկեղեցուց տուն տանելու համար: Ժամերգությունից հետո միաբանությունը, ուսանողները և հավատացյալները հավաքվեցին Հոգևոր Ճեմարանի մարզադաշտ՝ Տեառնընդառաջի ավանդական խարույկը վառելու և տոնը երգերով ու ասմունքներով դիմավորելու:

***

Փետրվարի 14-ին, ուրբաթ.- Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան աբեղ. Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց գերշ. Տ. Տաթև եպս. Սարգսյանը՝ բնաբան ունենալով «Եւ օրհնեաց զնոսա Սիմէովն, եւ ասէ ցՄարիամ մայրն նորա. Ահա սա կայ ի գլորումն եւ ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի, եւ ի նշան հակառակութեան. եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք» /Ղուկաս Բ 34-35/ հատվածը:

***

Փետրվարի 16-ին, կիրակի.- Բ կիրակի Քառասնորդական Պահոց /Արտաքսման/:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսեհ աբեղ. Խալաթյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց հոգշ. Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը՝ բնաբան ունենալով «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ» (Մտթ. Ե 17) հատվածը:

Հավարտ ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ:

***

Փետրվարի 23-ին, կիրակի.- Գ կիրակի Քառասնորդական Պահոց /Անառակին/:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մաշտոց աբղ. Ժողոյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց հոգշ. Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը՝ «զի որդի իմ կորուսեալ էր և գտաւ, մեռած էր և եկեաց»(Ղուկ. ԺԵ 24) բնաբանով /տես էջ 138/:

Հավարտ ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ:

***

Մարտի 2-ին, կիրակի.- Դ կիրակի Քառասնորդական Պահոց /Տնտեսին/:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշ. Տ. Բաբկեն աբղ. Սալբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Տուր զհամար տնտեսութեան քո» բնաբանով (Ղուկ. ԺԶ, 2): Նորին Սրբությունը ներկայացրեց իր՝ Ֆրանսիա և Ավստրալիա կատարած Հովվապետական այցելությունների արդյունքները և իր ստացած տպավորությունները՝ ֆրանսահայ և ավստրալահայ գաղութներից /Վեհափառ Հայրապետի քարոզը տես էջ 113/:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***

Մարտի 9-ին, կիրակի.- Ե կիրակի Քառասնորդական Պահոց /Դատաւորին/:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշ. Տ. Կարապետ աբղ. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Հոգեշ. Տ. Բագրատ աբղ. Գալստյանը՝ «Իսկ Որդի Մարդոյ եկեալ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի» /Ղուկ. ԺԸ, 8/ բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ:

***

Մարտի 15-ին, շաբաթ, ԼԴ օր Մեծի Պահոց.- Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Հոգեշ. Տ. Ասպետ վրդ. Պալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ հայր սուրբը՝ հավատացյալներին հաղորդ դարձնելով ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանքներին ու քրիստոնեության՝ որպես Տիեզերական կրոնի գաղափարին:

***

Մարտի 16-ին, կիրակի.- Զ կիրակի Քառասնորդական Պահոց /Գալստեան/:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Արժ. Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհուրդը ներկայացնող քարոզ խոսեց Հոգեշ. Տ. Տաթև աբղ. Հակոբյանը՝ «Զգոյշ կացէք, մի՛ խաբիցիք. զի բազումք գայցեն յանուն իմ եւ ասիցեն թէ ես եմ. եւ մերձեցաւ ժամանակ, մի երթայցէք զկնի նոցա» /Ղուկաս ԻԱ 8/ բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Մարտի 22-ին, շաբաթ.- ԽԱ օր Մեծի պահոց: Յիշատակ յարութեան Ղազարու:

Այսօր երեկոյան ժամերգության ավարտին, *Որ վերօրհնիս* շարականի երգեցողության ժամանակ բացվեցին Մայր Տաճարի վարագույրները:

***

Մարտի 23-ին, կիրակի.- Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արք. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը՝ «Ծերք և տղայք ոստովք ձիթենեօք միաբանութեամբ երգէին. օրհնութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան, Մայր Տաճարում կատարվեց **Դոնբացեք**-ի հոգեպարար արարողությունը: Աստվածաշնչյան ընթերցումներից հետո, Ավագ բեմի վրա, Ներսես արք. Պոզապալյանը, Բագրատ և Անուշավան աբեղաները ծնրադիր երգեցին «Բաց մեզ Տէր» տաղը:

Այսօր Հայ Առաքելական Եկեղեցին մտավ **Ավագ Շաբաթ**-ի սրբազան արարողություններով ու հիշատակություններով շրջանը:

Նույն օրը Միքայել ծ. վրդ. Աջապահյանի ուղեկցությամբ Մայր Աթոռ ժամանեցին Հռոմի Պապական Արևելյան ինստիտուտի դասախոսներ Հայր Լևոն Զեքիյանը, Հիսուսյան միաբանության անդամներ պրոֆեսորներ հայր Ռոբերտ Թաֆթը, հայր Էդուարդ Ֆերուջիան, հայր Ռիչարդ Քեմուսը: Նրանք ժամանել էին ներկա գտնվելու Ավագ Շաբաթվա սրբազան արարողություններին, ինչպես նաև Հոգևոր Ճեմարանում դասախոսություններ կարդալու՝ «Ի՞նչ է քրիստոնեական ծիսագիտությունը» (Ռոբերտ Թաֆթ), «Վանականության էկյումենիկ նշանակությունը» (Էդուարդ Ֆերուջիա), «Ինչու՞ է արևմուտքում հետաքրքրությունը մեծանում արևելյան քրիստոնեության նկատմամբ» (Ռիչարդ Քեմուս) թեմաներով:

***

Մարտի 27-ին, Ավագ հինգշաբթի.- Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Տ. Տաթև արք. Սարգիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը ընթերցեց Սուրբ Բարսեղ Հայրապետի **Հաղորդության** վերաբերյալ ճառը:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան Մայր Տաճարում կատարվեց Սուրբ Եփրեմի կողմից հաստատված և Գրիգոր Վկայասէր Հայրապետի կողմից թարգմանված **Ոտնլուայի** կարգը:

Ավագ Բեմի վրա տասներկու ճեմարանականների և Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների ոտքերը ջրով լվաց և ապա յուղով օծեց Տաթև արք. Սարգիսյանը:

Վերջում քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով Ոտնլվայի խորհուրդը, որ ըստ էության խոնարհության մի աքանչելի օրինակ է տրված մարդկությանը Աստծո կողմից:

***

Մարտի 28-ին, Ավագ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մարտի 27-ի ուշ երեկոյան, համաձայն եկեղեցական կարգի՝ մարտի 28-ին,

Մայր Տաճարում կատարվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի չարչարանքների և խաչելության հիշատակության կարգը: Աստվածաշնչյան ընթերցումներից, հոգեպարար շարականների և Սաղմոսների երգեցողությունից հետո *խավարման գիշերվա* խորհրդանշական, սքանչելի և հոգեհույզ մթնոլորտում քարոզ խոսեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը՝ խաչելության խորհուրդը ներկայացնելով: Քարոզի բնաբանն էր «Ի խաչ հան զդա» (Մարկոս ԺԵ 14):

Մարտի 28-ին առավոտյան, ժ. 11. 00-ին կատարվեց Խաչելության կարգը, իսկ ժ. 16. 00-ին Թաղման կարգը՝ Տիրոջ խորհրդանշական գերեզմանի առաջնորդությամբ թափոր կազմելով եկեղեցու շուրջը՝ «Պարգևատուն ամենեցուն» շարականի երգեցողությամբ:

***

Մարտի 29-ին, Ավագ շաբաթ.- Ճրագալույց Զատկի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահե արք. Աճեմյանը: Պատարագից առաջ, Երեկոյան ժամերգության ավարտին ընթերցվեցին Աստվածաշնչյան հատվածներ, ի շարս որոնց, Մայր Աթոռի սարկավագները Ավագ բեմից կարդացին Դանիէլի թուղթը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը՝ «Հաւատովք ճանաչել զնա եւ զզօրութիւն յարութեան նորա, եւ զհաղորդութիւն չարչարանաց նորա, կերպարանակից լինել մահու նորա» (Առ Փիլիպեցիսն, Գ 10) բնաբանով /տես էջ 142/:

Ս. Պատարագից հետո թափորը, «Այսօր յարեաւ» շարականի երգեցողությամբ շարժվեց Վեհարան, ուր կատարվեց Վեհարանի *Տնօրհնեքը*: Ապա ողջ միաբանությունն ու ուսանողությունը Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ հավաքվեց Միաբանական սեղանատուն՝ միասին անցկացնելու խթման ընթրիքը, որի ժամանակ հնչեցին Հարության տաղեր և շարականներ, ինչպես նաև ազգային երգեր: Այս ուրախ սիրո ճաշը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի խոսքով, որում Նորին Սրբությունը շեշտեց Ս. Հարության գաղափարի գիտակցության կարևորությունը:

***

Մարտի 30-ին, կիրակի, Զատիկ.- Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արք. Սանթուրյանը:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը Հարության տոնի առթիվ իր հայրական պատգամը տվեց համայն հայ ժողովրդին /տես էջ 3/:

Ս. Պատարագին ներկա էին Հանրապետության նորընտիր վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային Ժողովի նախագահ տիար Բաբկեն Արարքցյանը, Սահմանադրական դատարանի նախագահ տիար Գագիկ Հարությունյանը, նախարարներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ: Հավարտ Ս. Պատարագի Վեհարանի ընդունելությունների դահլիճում տեղի ունեցավ հյուրասիրություն՝ ի պատիվ բոլոր ներկաների և հյուրերի:

***

Մարտի 31-ին.- Բ օր Զատկի. Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Բագրատ աբեղա Գալստյանը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»: